## ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«23» մայիսի 2014թ. N 316-Ն

ք. Ստեփանակերտ

### ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԻ ՀԱՐԿԱՅԻՆ ՏԱՐՎԱ ԳՈՒՅՔԻ, ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՈՒՄ, ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍՏԱՆՁՆԵԼՈՒ ԿԱՄ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՕՐՎԱ ԴՐՈՒԹՅԱՄԲ ԱՌԿԱ ԳՈՒՅՔԻ, ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՈՒՄ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԻ ԱՄՈՒՍՆՈՒՆ, ՀԱՄԱՏԵՂ ԱՊՐՈՂ ԾՆՈՂԻՆ, ՀԱՄԱՏԵՂ ԱՊՐՈՂ ՉԱՓԱՀԱՍ ԵՎ ՉԱՄՈՒՍՆԱՑԱԾ ԶԱՎԱԿԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ՝ ՀԱՐԿԱՅԻՆ ՏԱՐՎԱ ԳՈՒՅՔԻ, ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ՝ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՆՔՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ՁԵՎԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի և եկամուտների հայտարարագրման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասին և «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 73-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել՝

1) բարձրաստիճան պաշտոնատար անձի հարկային տարվա գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց հայտարարագրում, բարձրաստիճան պաշտոնատար անձի պաշտոնական պարտականությունները ստանձնելու կամ պաշտոնական պարտականությունները դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց հայտարարագրում, ինչպես նաև բարձրաստիճան պաշտոնատար անձի ամուսնուն, համատեղ ապրող ծնողին, համատեղ ապրող չափահաս ու չամուսնացած զավակին սեփականության իրավունքով պատկանող՝ հարկային տարվա գույքի, եկամուտների մասին

հայտարարագրում ներառված՝ հրապարակման ենթակա տվյալների վերաբերյալ տեղեկանքների բովանդակությունը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) բարձրաստիճան պաշտոնատար անձի հարկային տարվա գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց հայտարարագրում, բարձրաստիճան պաշտոնատար անձի պաշտոնական պարտականությունները ստանձնելու կամ պաշտոնական պարտականությունները դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց հայտարարագրում, ինչպես նաև բարձրաստիճան պաշտոնատար անձի ամուսնուն, համատեղ ապրող ծնողին, համատեղ ապրող չափահաս ու չամուսնացած զավակին սեփականության իրավունքով պատկանող՝ հարկային տարվա գույքի, եկամուտների մասին հայտարարագրում ներառված՝ հրապարակման ենթակա տվյալների վերաբերյալ տեղեկանքների ձևերը՝ համաձայն N 2 հավելվածի.

3) բարձրաստիճան պաշտոնատար անձի հարկային տարվա գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց հայտարարագրում, բարձրաստիճան պաշտոնատար անձի պաշտոնական պարտականությունները ստանձնելու կամ պաշտոնական պարտականությունները դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց հայտարարագրում, ինչպես նաև բարձրաստիճան պաշտոնատար անձի ամուսնուն, համատեղ ապրող ծնողին, համատեղ ապրող չափահաս ու չամուսնացած զավակին սեփականության իրավունքով պատկանող՝ հարկային տարվա գույքի, եկամուտների մասին հայտարարագրում ներառված՝ հրապարակման ենթակա տվյալների վերաբերյալ տեղեկանքների լրացման կարգը՝ համաձայն N 3 հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 21-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության իշխանության մարմինների ղեկավար աշխատողների գույքի և եկամուտների վերաբերյալ հայտարարագիր ներկայացնողների մասին տվյալները Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարկային պետական վարչություն ներկայացնելու մասին» N 17 և «Հայտարարագիր ներկայացնողների բնամթերային (ոչ դրամական) ձևով ստացված եկամուտները գույքի և եկամուտների հայտարարագրերում ազատ (շուկայական) գներով հաշվի առնելու կարգը հաստատելու մասին» N 19, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության

կառավարության 2003 թվականի մայիսի 27-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության իշխանության մարմինների ղեկավար աշխատողների ու նրանց՝ օրենքով սահմանված փոխկապակցված անձանց գույքի և եկամուտների հայտարարագրերում ներառվող տեղեկությունների վերաբերյալ հրապարակման ենթակա տեղեկանքների ձևերը և դրանց լրացման կարգը հաստատելու մասին» N 162 որոշումները:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ**
**ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ** **Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Հավելված N 1
Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության կառավարության
2014 թվականի մայիսի 23-ի
N 316-Ն որոշման

# Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
## ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԻ ՀԱՐԿԱՅԻՆ ՏԱՐՎԱ ԳՈՒՅՔԻ, ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՈՒՄ, ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍՏԱՆՁՆԵԼՈՒ ԿԱՄ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՕՐՎԱ ԴՐՈՒԹՅԱՄԲ ԱՌԿԱ ԳՈՒՅՔԻ, ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՈՒՄ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԻ ԱՄՈՒՍՆՈՒ, ՀԱՄԱՏԵՂ ԱՊՐՈՂ ԾՆՈՂԻ, ՀԱՄԱՏԵՂ ԱՊՐՈՂ ՉԱՓԱՀԱՍ ԵՎ ՉԱՄՈՒՍՆԱՑԱԾ ԶԱՎԱԿԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ՝ ՀԱՐԿԱՅԻՆ ՏԱՐՎԱ ԳՈՒՅՔԻ, ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ՝ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՆՔՆԵՐԻ

1. Բարձրաստիճան պաշտոնատար անձի հարկային տարվա գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց հայտարարագրում ներառված՝ հրապարակման ենթակա տվյալների վերաբերյալ տեղեկանքը պետք է բովանդակի՝

1) հարկային տարվա տարեթիվը.

2) բարձրաստիճան պաշտոնատար անձի (հայտարարատուի) ազգանունը, անունը, հայրանունը.

3) բարձրաստիճան պաշտոնատար անձի զբաղեցրած պաշտոնը.

4) բարձրաստիճան պաշտոնատար անձի պաշտոնը ստանձնելու օրը, ամիսը, տարեթիվը.

5) բարձրաստիճան պաշտոնատար անձի ամուսնու, համատեղ ապրող ծնողի և համատեղ ապրող չափահաս ու չամուսնացած զավակի ազգանունը, անունը և հայրանունը.

6) բարձրաստիճան պաշտոնատար անձի կամ նրա ամուսնու հետ՝ ներառյալ մինչև 2-րդ աստիճանի արյունակցական կապի մեջ գտնվող՝ պաշտոն զբաղեցնող փոխկապակցված անձի զբաղեցրած պաշտոնը, ազգակցական կապը, ազգանունը, անունը, հայրանունը.

7) անշարժ գույքի տեսակը, հարկային տարում ձեռք բերված գույքի գինը և արժույթը, հարկային տարում օտարված գույքի գինը և արժույթը, եթե անշարժ գույքի ձեռքբերման գործարքների ընդհանուր գինը կամ օտարման գործարքների

ընդհանուր գինը գերազանցել է 50 000 000 ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը.

8) շարժական գույքի տեսակը, սերիան, մակնիշը, հարկային տարում ձեռք բերված գույքի գինը և արժույթը, հարկային տարում օտարված գույքի գինը և արժույթը, եթե բարձրաստիճան պաշտոնատար անձի և նրա ամուսնու կողմից հարկային տարվա ընթացքում օտարված, իսկ ձեռքբերման դեպքում՝ նաև ձեռք բերված շարժական գույքի մեկ միավորի գինը գերազանցել է 7 000 000 ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը.

9) արժեթղթերը և (կամ) այլ ներդրումը հավաստող փաստաթղթի տեսակը և արժույթը, հարկային տարում արժեթղթերի ձեռքբերման գինը (արժեքը), հարկային տարում արժեթղթերի օտարման գինը (արժեքը), եթե գործարքի գինը գերազանցել է 5 000 000 ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը.

10) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի մայիսի 22-ի N 314-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված հայտարարագրի Բ1-Բ4-րդ կետերում չնշված և 8 000 000 ՀՀ դրամից կամ դրան համարժեք արտարժույթից ավելի արժեք ունեցող թանկարժեք գույքի անվանումը, հարկային տարում ձեռք բերված գույքի գինը և արժույթը, հարկային տարում օտարված գույքի գինը և արժույթը.

11) բարձրաստիճան պաշտոնատար անձի հարկային տարվա ընթացքում ստացված եկամուտների արժույթը, եկամտի հանրագումարը՝ արտարժույթով (արտացոլված ըստ արժույթի տեսակների), դրամով և բնամթերքով, այդ թվում՝ աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումների արժույթը, գումարը՝ արտարժույթով (արտացոլված ըստ արժույթի տեսակների), դրամով և բնամթերքով:

2. Բարձրաստիճան պաշտոնատար անձի պաշտոնական պարտականությունները ստանձնելու կամ պաշտոնական պարտականությունները դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց հայտարարագրում ներառված՝ հրապարակման ենթակա տվյալների վերաբերյալ տեղեկանքը պետք է բովանդակի՝

1) բարձրաստիճան պաշտոնատար անձի (հայտարարատուի) ազգանունը, անունը, հայրանունը.

2) բարձրաստիճան պաշտոնատար անձի զբաղեցրած պաշտոնը.

3) պաշտոնը ստանձնելու (դադարեցնելու) ամսաթիվը.

4) բարձրաստիճան պաշտոնատար անձի ամուսնու, համատեղ ապրող ծնողի և համատեղ ապրող չափահաս ու չամուսնացած զավակի ազգանունը, անունը և հայրանունը.

5) բարձրաստիճան պաշտոնատար անձի կամ նրա ամուսնու հետ՝ ներառյալ մինչև 2-րդ աստիճանի արյունակցական կապի մեջ գտնվող՝ պաշտոն զբաղեցնող փոխկապակցված անձի զբաղեցրած պաշտոնը, ազգակցական կապը, ազգանունը, անունը, հայրանունը.

6) պաշտոնական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրվա դրությամբ առկա անշարժ գույքի տեսակը և քանակը.

7) պաշտոնական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրվա դրությամբ շարժական գույքի տեսակը, սերիան, մակնիշը.

8) պաշտոնական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրվա դրությամբ արժեթղթերը և (կամ) այլ ներդրումը հավաստող փաստաթղթի տեսակը, արժեքը գինը, արժույթը.

9) բարձրաստիճան պաշտոնատար անձի՝ պաշտոնական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու տարվան նախորդող հարկային տարվա ընթացքում, ինչպես նաև պաշտոնական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու տարվա հունվարի 1-ից մինչև պաշտոնական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրը ձեռք բերված և օտարված՝ հայտարարագրի աղյուսակի 2-5-րդ կետերում չնշված՝ 8 000 000 ՀՀ դրամը գերազանցող կամ դրան համարժեք արտարժույթից ավելի արժեք ունեցող ցանկացած գույքի (թանկարժեք գույք) անվանումը, համառոտ հատկանիշները, առկա է պաշտոնական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրվա դրությամբ.

10) բարձրաստիճան պաշտոնատար անձի՝ պաշտոնական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու տարվան նախորդող հարկային տարվա ընթացքում, ինչպես նաև պաշտոնական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու տարվա հունվարի 1-ից մինչև պաշտոնական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրը ստացված եկամուտների արժույթը, եկամտի հանրագումարը՝ արտարժույթով (արտացոլված

ըստ արժույթի տեսակների), դրամով և բնամթերքով, այդ թվում՝ աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումների արժույթը, գումարը՝ արտարժույթով (արտացոլված ըստ արժույթի տեսակների), դրամով և բնամթերքով:

3. Բարձրաստիճան պաշտոնատար անձի ամուսնուն, համատեղ ապրող ծնողին, համատեղ ապրող չափահաս ու չամուսնացած զավակին սեփականության իրավունքով պատկանող հարկային տարվա գույքի և եկամուտների հայտարարագրում ներառված՝ հրապարակման ենթակա տվյալների վերաբերյալ տեղեկանքը պետք է բովանդակի՝

1) հարկային տարվա տարեթիվը.

2) բարձրաստիճան պաշտոնատար անձի ազգանունը, անունը, հայրանունը.

3) բարձրաստիճան պաշտոնատար անձի զբաղեցրած պաշտոնը.

4) ամուսնու (ծնողի, զավակի) ազգանունը, անունը, հայրանունը.

5) բարձրաստիճան պաշտոնատար անձի ամուսնու անշարժ գույքի տեսակը, հարկային տարում ձեռք բերված գույքի գինը և արժույթը, հարկային տարում օտարված գույքի գինը և արժույթը, եթե անշարժ գույքի ձեռքբերման գործարքների ընդհանուր գինը կամ օտարման գործարքների ընդհանուր գինը գերազանցել է 50 000 000 ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը.

6) բարձրաստիճան պաշտոնատար անձի հետ համատեղ ապրող ծնողի, համատեղ ապրող չափահաս ու չամուսնացած զավակի անշարժ գույքի տեսակը, հարկային տարում ձեռք բերված գույքի գինը և արժույթը, հարկային տարում օտարված գույքի գինը և արժույթը, եթե անշարժ գույքի ձեռքբերման գործարքների ընդհանուր գինը կամ օտարման գործարքների ընդհանուր գինը գերազանցել է 50 000 000 ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը.

7) բարձրաստիճան պաշտոնատար անձի ամուսնու շարժական գույքի տեսակը, սերիան, մակնիշը, հարկային տարում ձեռք բերված գույքի գինը և արժույթը, հարկային տարում օտարված գույքի գինը և արժույթը, եթե բարձրաստիճան պաշտոնատար անձի ամուսնու կողմից հարկային տարվա ընթացքում օտարված, իսկ ձեռքբերման դեպքում նաև ձեռք բերված շարժական գույքի մեկ միավորի գինը գերազանցել է 7 000 000 ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը.

8) բարձրաստիճան պաշտոնատար անձի հետ համատեղ ապրող ծնողի, համատեղ ապրող չափահաս ու չամուսնացած զավակի շարժական գույքի տեսակը,

սերիան, մակնիշը, հարկային տարում ձեռք բերված գույքի գինը և արժույթը, հարկային տարում օտարված գույքի գինը և արժույթը, եթե բարձրաստիճան պաշտոնատար անձի հետ համատեղ ապրող ծնողի, համատեղ ապրող չափահաս ու չամուսնացած զավակի կողմից հարկային տարվա ընթացքում ձեռք բերված, իսկ օտարման դեպքում նաև օտարված շարժական գույքի գործարքների ընդհանուր գինը (արժեքը) գերազանցել է 8 000 000 ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը.

9) բարձրաստիճան պաշտոնատար անձի ամուսնու արժեթղթերը և (կամ) այլ ներդրումը հավաստող փաստաթղթի տեսակը և արժույթը, հարկային տարում արժեթղթերի ձեռքբերման գինը (արժեքը), հարկային տարում արժեթղթերի օտարման գինը (արժեքը), եթե գործարքի գինը գերազանցել է 5 000 000 ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը.

10) բարձրաստիճան պաշտոնատար անձի հետ համատեղ ապրող ծնողի, համատեղ ապրող չափահաս ու չամուսնացած զավակի արժեթղթերը և (կամ) այլ ներդրումը հավաստող փաստաթղթի տեսակը և արժույթը, հարկային տարում արժեթղթերի ձեռքբերման գինը (արժեքը), հարկային տարում արժեթղթերի օտարման գինը (արժեքը), եթե բարձրաստիճան պաշտոնատար անձի հետ համատեղ ապրող ծնողի, համատեղ ապրող չափահաս ու չամուսնացած զավակի կողմից հարկային տարվա ընթացքում օտարված կամ ձեռք բերված արժեթղթերի և (կամ) այլ ներդրման գործարքների ընդհանուր գինը գերազանցել է 8 000 000 ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը.

11) բարձրաստիճան պաշտոնատար անձի ամուսնու՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի մայիսի 22-ի N 314-Ն որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետով հաստատված հայտարարագրի Ա1-Ա4-րդ կետերում չնշված և 8 000 000 ՀՀ դրամը գերազանցող կամ դրան համարժեք արտարժույթից ավելի արժեք ունեցող թանկարժեք գույքի անվանումը, հարկային տարում ձեռք բերված գույքի գինը և արժույթը, հարկային տարում օտարված գույքի գինը և արժույթը.

12) բարձրաստիճան պաշտոնատար անձի հետ համատեղ ապրող ծնողի, համատեղ ապրող չափահաս ու չամուսնացած զավակի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի մայիսի 22-ի N 314-Ն որոշման

1-ին կետի 3-րդ ենթակետով հաստատված հայտարարագրի Ա1-Ա4-րդ կետերում չնշված և 8 000 000 ՀՀ դրամը գերազանցող կամ դրան համարժեք արտարժույթից ավելի արժեք ունեցող թանկարժեք գույքի անվանումը, հարկային տարում ձեռք բերված գույքի գինը և արժույթը, հարկային տարում օտարված գույքի գինը և արժույթը.

13) բարձրաստիճան պաշտոնատար անձի ամուսնու՝ հարկային տարվա ընթացքում ստացած եկամուտների արժույթը, եկամտի հանրագումարը՝ արտարժույթով (արտացոլված ըստ արժույթի տեսակների), դրամով և բնամթերքով, այդ թվում՝ աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումների արժույթը, գումարը՝ արտարժույթով (արտացոլված ըստ արժույթի տեսակների), դրամով և բնամթերքով.

14) բարձրաստիճան պաշտոնատար անձի հետ համատեղ ապրող ծնողի, համատեղ ապրող չափահաս ու չամուսնացած զավակի՝ հարկային տարվա ընթացքում ստացած եկամուտների արժույթը, եկամտի հանրագումարը՝ արտարժույթով (արտացոլված ըստ արժույթի տեսակների), դրամով և բնամթերքով, այդ թվում՝ աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումների արժույթը, գումարը՝ արտարժույթով (արտացոլված ըստ արժույթի տեսակների), դրամով և բնամթերքով:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ**
**ՂԵԿԱՎԱՐ** **Լ.ԳՐԻԳՈՐՅԱՆ**

Հավելված N 2
Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության կառավարության
2014 թվականի մայիսի 23-ի
N 316-Ն որոշման

***Ձև 1***

**Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք**

**ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԻ __________ ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԻ, ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ՝ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

| Հ/Հ | 1. ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ | |
|---|---|---|
| 1.1. | Հայտարարատուի ազգանունը, անունը, հայրանունը | |
| 1.2. | Զբաղեցրած պաշտոնը | |
| 1.3. | Պաշտոնը ստանձնելու տարեթիվը | |

| 2. ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԻ ՀԵՏ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ԱՆՁԻՆՔ | | |
|---|---|---|
| **2.1. Բարձրաստիճան պաշտոնատար անձի ամուսինը, նրա հետ համատեղ ապրող ծնողը, համատեղ ապրող չափահաս և չամուսնացած զավակները** | | |
| Հ/Հ | Ազգանունը, անունը, հայրանունը | |
| 2.1.1. | Ամուսին | |
| 2.1.2. | Ծնող | |
| 2.1.3. | | |
| 2.1.4. | Զավակ | |
| 2.1.5. | | |
| 2.1.6. | | |
| 2.1.7. | | |
| 2.1.8. | | |

| **2.2. Բարձրաստիճան պաշտոնատար անձի կամ նրա ամուսնու հետ՝ ներառյալ մինչև 2-րդ աստիճանի արյունակցական կապի մեջ գտնվող՝ պաշտոն զբաղեցնող փոխկապակցված անձինք** | | | |
|---|---|---|---|
| Հ/Հ | Զբաղեցրած պաշտոնը | Ազգակցական կապը | Ազգանունը, անունը, հայրանունը |
| 2.2.1. | | | |
| 2.2.2. | | | |
| 2.2.3. | | | |

| 3. ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԻ ԳՈՒՅՔԸ | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **3.1. Անշարժ գույքը** | | | | | |
| Հ/Հ | Տեսակը | Ձեռք է բերվել հարկային տարում | | Օտարվել է հարկային տարում | |
| | | գինը (արժեքը) | արժույթը | գինը (արժեքը) | արժույթը |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|
| 3.1.1. | | | | | |
| 3.1.2. | | | | | |
| 3.1.3. | | | | | |
| 3.1.4. | | | | | |
| 3.1.5. | | | | | |
| 3.1.6. | | | | | |
| 3.1.7. | | | | | |
| 3.1.8. | | | | | |

**3.2. Շարժական գույքը**

| Հ/Հ | Տեսակը | Սերիան, մակնիշը | Ձեռք է բերվել հարկային տարում | | Օտարվել է հարկային տարում | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | գինը (արժեքը) | արժույթը | գինը (արժեքը) | արժույթը |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| 3.2.1. | | | | | | |
| 3.2.2. | | | | | | |
| 3.2.3. | | | | | | |
| 3.2.4. | | | | | | |
| 3.2.5. | | | | | | |
| 3.2.6. | | | | | | |
| 3.2.7. | | | | | | |

**3.3. Արժեթղթերը և այլ ներդրումներ**

| Հ/Հ | Տեսակը | Արժույթը | Ձեռք է բերվել հարկային տարում | Օտարվել է հարկային տարում |
|---|---|---|---|---|
| | | | գինը (արժեքը) | գինը (արժեքը) |
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 3.3.1. | | | | |
| 3.3.2. | | | | |
| 3.3.3. | | | | |
| 3.3.4. | | | | |
| 3.3.5 | | | | |

**3.4. 8 000 000 ՀՀ դրամը գերազանցող կամ դրան համարժեք արտարժույթից ավելի արժեք ունեցող ցանկացած գույք (թանկարժեք գույքը)**

| Հ/Հ | Անվանումը | Ձեռք է բերվել հարկային տարում | | Օտարվել է հարկային տարում | |
|---|---|---|---|---|---|
| | | գինը (արժեքը) | արժույթը | գինը (արժեքը) | արժույթը |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 3.4.1. | | | | | |
| 3.4.2. | | | | | |
| 3.4.3. | | | | | |
| 3.4.4. | | | | | |
| 3.4.5. | | | | | |

**4. ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ**

| Հ/Հ | Եկամտի տեսակը | Արժույթը | Եկամտի չափը (գումարը) | | |
|---|---|---|---|---|---|
| | | | ՀՀ դրամով | արտարժույթով | բնամթերքով |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 4.1. | Եկամուտներ՝ ընդամենը | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | |
| | | | | | |
| | | | | | |
| | | | | | |
| 4.2. | այդ թվում՝ աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ | | | | |
| | | | | | |
| | | | | | |
| | | | | | |

*Ձև 2*

**Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք**

**ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍՏԱՆՁՆԵԼՈՒ ԿԱՄ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՕՐՎԱ ԴՐՈՒԹՅԱՄԲ ԱՌԿԱ ԳՈՒՅՔԻ, ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ՝ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

| Հ/Հ | 1. ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ | |
|---|---|---|
| 1.1. | Հայտարարատուի ազգանունը, անունը, հայրանունը | |
| 1.2. | Զբաղեցրած պաշտոնը | |
| 1.3. | Պաշտոնը ստանձնելու (դադարեցնելու) ամսաթիվը | |

| 2. ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԻ ՀԵՏ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ԱՆՁԻՆՔ | | |
|---|---|---|
| **2.1. Բարձրաստիճան պաշտոնատար անձի ամուսինը, նրա հետ համատեղ ապրող ծնողը, համատեղ ապրող չափահաս և չամուսնացած զավակները** | | |
| Հ/Հ | | Ազգանունը, անունը, հայրանունը |
| 2.1.1. | Ամուսին | |
| 2.1.2. | Ծնող | |
| 2.1.3. | | |
| 2.1.4. | Զավակ | |
| 2.1.5. | | |
| 2.1.6. | | |
| 2.1.7. | | |
| 2.1.8. | | |

| **2.2. Բարձրաստիճան պաշտոնատար անձի կամ նրա ամուսնու հետ՝ ներառյալ մինչև 2-րդ աստիճանի արյունակցական կապի մեջ գտնվող՝ պաշտոն զբաղեցնող փոխկապակցված անձինք** | | | |
|---|---|---|---|
| Հ/Հ | Զբաղեցրած պաշտոնը | Ազգակցական կապը | Ազգանունը, անունը, հայրանունը |
| 2.2.1. | | | |
| 2.2.2. | | | |
| 2.2.3. | | | |

| 3. ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԻ ԳՈՒՅՔԸ | | |
|---|---|---|
| **3.1. Անշարժ գույքը** | | |
| Հ/Հ | Տեսակը | Քանակը |
| 1 | 2 | 3 |
| 3.1.1. | | |
| 3.1.2. | | |
| 3.1.3. | | |
| 3.1.4. | | |
| 3.1.5. | | |
| 3.1.6. | | |
| 3.1.7. | | |
| 3.1.8. | | |

| 3.2. Շարժական գույքը | | |
|---|---|---|
| Հ/Հ | Տեսակը | Սերիան, մակնիշը |
| 1 | 2 | 3 |
| 3.2.1. | | |
| 3.2.2. | | |
| 3.2.3. | | |
| 3.2.4. | | |
| 3.2.5. | | |
| 3.2.6. | | |
| 3.2.7. | | |

| 3.3. Բարձրաստիճան պաշտոնատար անձի առկա արժեթղթերը կամ այլ ներդրումներ՝ պաշտոնական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրվա դրությամբ | | | |
|---|---|---|---|
| Հ/Հ | Արժեթղթի կամ այլ ներդրման տեսակը | Արժեքը (գինը) | Արժույթը |
| 1 | 2 | 3 | 4 |
| 3.3.1. | | | |
| 3.3.2. | | | |
| 3.3.3. | | | |

| 3.4. Բարձրաստիճան պաշտոնատար անձի՝ պաշտոնական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու տարվան նախորդող հարկային տարվա ընթացքում, ինչպես նաև պաշտոնական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու տարվա հունվարի 1-ից մինչև պաշտոնական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրը ձեռք բերված և օտարված՝ հայտարարագրի աղյուսակի 2-5-րդ կետերում չնշված՝ 8 000 000 ՀՀ դրամը գերազանցող կամ դրան համարժեք արտարժույթից ավելի արժեք ունեցող ցանկացած գույք (թանկարժեք գույքը) | |
|---|---|
| Հ/Հ | Անվանումը, համառոտ հատկանիշները |
| 1 | 2 |
| 3.4.1. | |
| 3.4.2. | |
| 3.4.3. | |
| 3.4.4. | |
| 3.4.5. | |

| 4. ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Հ/Հ | Եկամտի տեսակը | Արժույթը | Եկամտի չափը (գումարը) | | |
| | | | ՀՀ դրամով | արտարժույթով | բնամթերքով |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 4.1. | Եկամուտներ՝ ընդամենը | | | | |
| | | | | | |
| | | | | | |
| | | | | | |
| | | | | | |
| 4.2. | այդ թվում՝ աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ | | | | |
| | | | | | |
| | | | | | |
| | | | | | |

*Ձև 3*

# Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

______ ԹՎԱԿԱՆԻ ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԻ ԱՄՈՒՍՆՈՒՆ, ՀԱՄԱՏԵՂ ԱՊՐՈՂ ԾՆՈՂԻՆ, ՀԱՄԱՏԵՂ ԱՊՐՈՂ ՉԱՓԱՀԱՍ ԵՎ ՉԱՄՈՒՍՆԱՑԱԾ ԶԱՎԱԿԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ՝ ՀԱՐԿԱՅԻՆ ՏԱՐՎԱ ԳՈՒՅՔԻ, ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ՝ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

| Հ/Հ | 1. ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԻ ԱՄՈՒՍՆՈՒ, ՆՐԱ ՀԵՏ ՀԱՄԱՏԵՂ ԱՊՐՈՂ ԾՆՈՂԻ, ՀԱՄԱՏԵՂ ԱՊՐՈՂ ՉԱՓԱՀԱՍ ԵՎ ՉԱՄՈՒՍՆԱՑԱԾ ԶԱՎԱԿԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ | |
|---|---|---|
| 1.1 | Բարձրաստիճան պաշտոնատար անձի ազգանունը, անունը, հայրանունը | |
| 1.2 | Բարձրաստիճան պաշտոնատար անձի զբաղեցրած պաշտոնը | |
| 1.3 | Ամուսնու, ծնողի, զավակի ազգանունը, անունը, հայրանունը | |

**2. ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԻ ԱՄՈՒՍՆՈՒ, ՆՐԱ ՀԵՏ ՀԱՄԱՏԵՂ ԱՊՐՈՂ ԾՆՈՂԻ, ՀԱՄԱՏԵՂ ԱՊՐՈՂ ՉԱՓԱՀԱՍ ԵՎ ՉԱՄՈՒՍՆԱՑԱԾ ԶԱՎԱԿԻ ԳՈՒՅՔԸ**

**2.1.Անշարժ գույքը**

| Հ/Հ | Տեսակը | | Ձեռք է բերվել հարկային տարում | | Օտարվել է հարկային տարում | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | գինը (արժեքը) | արժույթը | գինը (արժեքը) | արժույթը |
| 1 | 2 | | 3 | 4 | 5 | 6 |
| | Ամուսին | | | | | |
| 2.1.1. | | | | | | |
| 2.1.2. | | | | | | |
| 2.1.3. | | | | | | |
| 2.1.4. | | | | | | |
| 2.1.5. | | | | | | |
| 2.1.6. | | | | | | |
| | Ծնող | | | | | |
| 2.1.7. | | | | | | |
| 2.1.8. | | | | | | |
| 2.1.9. | | | | | | |
| 2.1.10. | | | | | | |
| 2.1.11. | | | | | | |
| | Զավակ | | | | | |
| 2.1.12. | | | | | | |
| 2.1.13. | | | | | | |
| 2.1.14. | | | | | | |
| 2.1.15. | | | | | | |
| 2.1.16. | | | | | | |

**2.2.Շարժական գույքը**

| Հ/Հ | Տեսակը | Ձեռք է բերվել հարկային տարում | | Օտարվել է հարկային տարում | |
|---|---|---|---|---|---|
| | | գինը (արժեքը) | արժույթը | գինը (արժեքը) | արժույթը |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Ամուսին | | | | | |
| 2.2.1. | | | | | | |
| 2.2.2. | | | | | | |
| 2.2.3. | | | | | | |
| 2.2.4. | | | | | | |
| 2.2.5. | | | | | | |
| 2.2.6. | | | | | | |
| | Ծնող | | | | | |
| 2.2.7. | | | | | | |
| 2.2.8. | | | | | | |
| 2.2.9. | | | | | | |
| 2.2.10. | | | | | | |
| 2.2.11. | | | | | | |
| | Զավակ | | | | | |
| 2.2.12. | | | | | | |
| 2.2.13. | | | | | | |
| 2.2.14. | | | | | | |
| 2.2.15. | | | | | | |
| 2.2.16. | | | | | | |

**2.3. Արժեթղթերը և այլ ներդրումներ**

| Հ/Հ | Տեսակը | | Արժույթը | Ձեռք է բերվել հարկային տարում | Օտարվել է հարկային տարում |
|---|---|---|---|---|---|
| | | | | գինը (արժեքը) | գինը (արժեքը) |
| 1 | 2 | | 3 | 4 | 5 |
| | Ամուսին | | | | |
| 2.3.1. | | | | | |
| 2.3.2. | | | | | |
| 2.3.3. | | | | | |
| 2.3.4. | | | | | |
| 2.3.5. | | | | | |
| 2.3.6. | | | | | |
| | Ծնող | | | | |
| 2.3.7. | | | | | |
| 2.3.8. | | | | | |
| 2.3.9. | | | | | |
| 2.3.10. | | | | | |
| 2.3.11. | | | | | |
| | Զավակ | | | | |
| 2.3.12. | | | | | |
| 2.3.13. | | | | | |
| 2.3.14. | | | | | |
| 2.3.15. | | | | | |
| 2.3.16. | | | | | |
| 2.3.17. | | | | | |

**2.4. 8 000 000 ՀՀ դրամը գերազանցող կամ դրան համարժեք արտարժույթից ավելի արժեք ունեցող ցանկացած գույք (թանկարժեք գույքը)**

| Հ/Հ | Անվանումը | Ձեռք է բերվել հարկային տարում | Օտարվել է հարկային տարում |
|---|---|---|---|

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | |
| | | | գինը (արժեքը) | արժույթը | գինը (արժեքը) | արժույթը |
| 1 | 2 | | 3 | 4 | 5 | 6 |
| | Ամուսին | | | | | |
| 2.4.1. | | | | | | |
| 2.4.2. | | | | | | |
| 2.4.3. | | | | | | |
| 2.4.4. | | | | | | |
| 2.4.5. | | | | | | |
| 2.4.6. | | | | | | |
| | Ծնող | | | | | |
| 2.4.7. | | | | | | |
| 2.4.8. | | | | | | |
| 2.4.9. | | | | | | |
| 2.4.10. | | | | | | |
| 2.4.11. | | | | | | |
| | Զավակ | | | | | |
| 2.4.12. | | | | | | |
| 2.4.13. | | | | | | |
| 2.4.14. | | | | | | |
| 2.4.15. | | | | | | |
| 2.4.16. | | | | | | |

### 3. ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԻ ԱՄՈՒՍՆՈՒ, ՆՐԱ ՀԵՏ ՀԱՄԱՏԵՂ ԱՊՐՈՂ ԾՆՈՂԻ, ՀԱՄԱՏԵՂ ԱՊՐՈՂ ՉԱՓԱՀԱՍ ԵՎ ՉԱՄՈՒՍՆԱՑԱԾ ԶԱՎԱԿԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

| Հ/Հ | Եկամտի տեսակը | | Արժույթը | Եկամտի չափը (գումարը) | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | ՀՀ դրամով | արտարժույթով | բնամթերքով |
| 1 | 2 | | 3 | 4 | 5 | 6 |
| | Ամուսին | | | | | |
| 3.1. | | Եկամուտներ՝ ընդամենը | | | | |
| | | | | | | |
| | | | | | | |
| | | | | | | |
| 3.2. | | այդ թվում՝ աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ | | | | |
| | | | | | | |
| | | | | | | |
| | | | | | | |
| | Ծնող | | | | | |
| 3.3. | | Եկամուտներ՝ ընդամենը | | | | |
| | | | | | | |
| | | | | | | |
| | | | | | | |
| 3.4. | | այդ թվում՝ աշխատավարձ և դրան հավասարեցված<br><br>այլ վճարումներ | | | | |
| | | | | | | |
| | | | | | | |
| | | | | | | |
| | Զավակ | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 3.5. | | եկամուտներ՝ ընդամենը | | | | |
| | | | | | | |
| | | | | | | |
| | | | | | | |
| 3.6. | | այդ թվում՝ աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ | | | | |
| | | | | | | |
| | | | | | | |
| | | | | | | |

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ**
**ՂԵԿԱՎԱՐ** **Լ.ԳՐԻԳՈՐՅԱՆ**

Հավելված N 3

Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության կառավարության
2014 թվականի մայիսի 23-ի
N 316-Ն որոշման

# Կ Ա Ր Գ

## ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԻ ՀԱՐԿԱՅԻՆ ՏԱՐՎԱ ԳՈՒՅՔԻ, ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՈՒՄ, ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍՏԱՆՁՆԵԼՈՒ ԿԱՄ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՕՐՎԱ ԴՐՈՒԹՅԱՄԲ ԱՌԿԱ ԳՈՒՅՔԻ, ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՈՒՄ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԻ ԱՄՈՒՍՆՈՒ, ՀԱՄԱՏԵՂ ԱՊՐՈՂ ԾՆՈՂԻ, ՀԱՄԱՏԵՂ ԱՊՐՈՂ ՉԱՓԱՀԱՍ ԵՎ ՉԱՄՈՒՍՆԱՑԱԾ ԶԱՎԱԿԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ՝ ՀԱՐԿԱՅԻՆ ՏԱՐՎԱ ԳՈՒՅՔԻ, ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ՝ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՆՔՆԵՐԻ ԼՐԱՑՄԱՆ

1. Բարձրաստիճան պաշտոնատար անձի հարկային տարվա գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց հայտարարագրում ներառված՝ հրապարակման ենթակա տվյալների վերաբերյալ տեղեկանքում լրացվում է.

1) հարկային տարվա տարեթիվը, որի համար ներկայացվել է հայտարարագիրը.

2) բարձրաստիճան պաշտոնատար անձի (հայտարարատուի) ազգանունը, անունը, հայրանունը՝ ըստ անձնագրի.

3) բարձրաստիճան պաշտոնատար անձի զբաղեցրած պաշտոնի ամբողջական անվանումը՝ ներառելով պետական մարմնի անվանումը.

4) բարձրաստիճան պաշտոնատար անձի պաշտոնը ստանձնելու օրը, ամիսը, տարեթիվը.

5) բարձրաստիճան պաշտոնատար անձի ամուսնու, համատեղ ապրող ծնողի և համատեղ ապրող չափահաս ու չամուսնացած զավակի ազգանունը, անունը և հայրանունը.

6) բարձրաստիճան պաշտոնատար անձի կամ նրա ամուսնու հետ՝ ներառյալ մինչև 2-րդ աստիճանի արյունակցական կապի մեջ գտնվող՝ պաշտոն զբաղեցնող փոխկապակցված անձի զբաղեցրած պաշտոնի ամբողջական անվանումը, այդ թվում՝ պետական մարմնի այն կառուցվածքային ստորաբաժանման անվանումը,

որտեղ նա պաշտոն է զբաղեցնում, ազգակցական կապի տեսակը, անունը, ազգանունը, հայրանունը.

7) բարձրաստիճան պաշտոնատար անձին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքի տեսակը՝ հողամասը, ընդերքի մասը, մեկուսի ջրային օբյեկտը, անտառը, բազմամյա տնկին, շենքը, շինությունը, հողին ամրակայված այլ գույքը, եթե հարկային տարում ձեռք բերված գործարքների ընդհանուր գինը (արժեքը) կամ օտարման գործարքների ընդհանուր գինը (արժեքը) գերազանցել է 50 000 000 ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը: Ընդ որում, ձեռքբերման գործարքների ընդհանուր գինը (արժեքը) կամ օտարման գործարքների ընդհանուր գինը (արժեքը) 50 000 000 ՀՀ դրամը գերազանցելու դեպքում ներառվում են անշարժ գույքի ձեռքբերման ու օտարման բոլոր գործարքները, դրա գինը (արժեքը), արժույթի անվանումը.

8) բարձրաստիճան պաշտոնատար անձին սեփականության իրավունքով պատկանող շարժական գույքի տեսակը՝ ավտոմոբիլային տրանսպորտի միջոցները, որոնց շարժիչների աշխատանքային ծավալը գերազանցում է 50 խոր. սանտիմետրը, իսկ առավելագույն արագությունը՝ 50 կմ/ժամը, ինչպես նաև տարբեր բեռնատարողությամբ կցորդները կամ կիսակցորդները, անվավոր, թրթուրավոր, ինքնագնաց մեքենան կամ մեխանիզմը, օդային, ջրային փոխադրամիջոցը, որոնք օտարվել կամ ձեռք են բերվել հարկային տարում, դրանց սերիան, մակնիշը, գինը (արժեքը), արժույթի անվանումը, եթե բարձրաստիճան պաշտոնատար անձի և նրա ամուսնու կողմից հարկային տարվա ընթացքում օտարված, իսկ ձեռքբերման դեպքում՝ նաև ձեռք բերված շարժական գույքի մեկ միավորի գինը գերազանցել է 7 000 000 ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը.

9) բարձրաստիճան պաշտոնատար անձի կողմից հարկային տարում ձեռք բերված, իսկ օտարման դեպքում՝ նաև օտարված արժեթղթերը՝ պարտատոմսը, չեկը, մուրհակը, բաժնետոմսը և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքներով արժեթղթերի թվին դասվող այլ փաստաթուղթը՝ բացառությամբ բանկային վկայագրի և (կամ) այլ ներդրումը հավաստող փաստաթուղթը՝ բաժնեմասը, փայաբաժինը (արժեթուղթ և (կամ) այլ ներդրում), ինչպես նաև դրանց

գինը (արժեքը), արժույթի անվանումը, եթե գործարքի գինը գերազանցել է 5 000 000 ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը.

10) բարձրաստիճան պաշտոնատար անձի կողմից հարկային տարվա ընթացքում ձեռք բերված, իսկ օտարման դեպքում նաև օտարված՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի մայիսի 23-ի N 314-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված հայտարարագրի Բ1-Բ4-րդ կետերում չնշված և 8 000 000 ՀՀ դրամից կամ դրան համարժեք արտարժույթից ավելի արժեք ունեցող թանկարժեք գույքի անվանումը, գույքի գինը (արժեքը) և արժույթի անվանումը.

11) բարձրաստիճան պաշտոնատար անձի հարկային տարվա ընթացքում ստացված եկամուտների արժույթը, եկամտի հանրագումարը՝ արտարժույթով (արտացոլված ըստ արժույթի տեսակների), դրամով և բնամթերքով, այդ թվում՝ աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումների արժույթը, գումարը՝ արտարժույթով (արտացոլված ըստ արժույթի տեսակների), դրամով և բնամթերքով:

2. Բարձրաստիճան պաշտոնատար անձի պաշտոնական պարտականությունները ստանձնելու կամ պաշտոնական պարտականությունները դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց հայտարարագրում ներառված՝ հրապարակման ենթակա տվյալների վերաբերյալ տեղեկանքում լրացվում է.

1) բարձրաստիճան պաշտոնատար անձի (հայտարարատուի) ազգանունը, անունը, հայրանունը.

2) բարձրաստիճան պաշտոնատար անձի զբաղեցրած պաշտոնի ամբողջական անվանումը՝ ներառելով պետական մարմնի անվանումը.

3) պաշտոնը ստանձնելու (դադարեցնելու) ամսաթիվը.

4) բարձրաստիճան պաշտոնատար անձի ամուսնու, համատեղ ապրող ծնողի և համատեղ ապրող չափահաս ու չամուսնացած զավակի ազգանունը, անունը և հայրանունը.

5) բարձրաստիճան պաշտոնատար անձի կամ նրա ամուսնու հետ՝ ներառյալ մինչև 2-րդ աստիճանի արյունակցական կապի մեջ գտնվող՝ պաշտոն զբաղեցնող փոխկապակցված անձի զբաղեցրած պաշտոնի ամբողջական անվանումը, այդ թվում՝ պետական մարմնի այն կառուցվածքային ստորաբաժանման անվանումը,

որտեղ նա պաշտոն է զբաղեցնում, ազգակցական կապի տեսակը, ազգանունը, անունը, հայրանունը.

6) պաշտոնական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրվա դրությամբ առկա անշարժ գույքի տեսակը՝ հողամասը, ընդերքի մասը, մեկուսի ջրային օբյեկտը, անտառը, բազմամյա տնկին, շենքը, շինությունը, հողին ամրակայված այլ գույքը և քանակը.

7) պաշտոնական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրվա դրությամբ առկա շարժական գույքի տեսակը՝ ավտոմոբիլային տրանսպորտի միջոցները, որոնց շարժիչների աշխատանքային ծավալը գերազանցում է 50 խոր. սանտիմետրը, իսկ առավելագույն արագությունը՝ 50 կմ/ժամը, ինչպես նաև տարբեր բեռնատարողությամբ կցորդները կամ կիսակցորդները, անվավոր, թրթուրավոր, ինքնագնաց մեքենան կամ մեխանիզմը, օդային, ջրային փոխադրամիջոցը, դրանց սերիան, մակնիշը.

8) պաշտոնական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրվա դրությամբ առկա արժեթղթերը՝ պարտատոմսը, չեկը, մուրհակը, բաժնետոմսը և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքներով արժեթղթերի թվին դասվող այլ փաստաթուղթը՝ բացառությամբ բանկային վկայագրի և (կամ) այլ ներդրումը հավաստող փաստաթուղթը՝ բաժնեմասը, փայաբաժինը (արժեթուղթ և (կամ) այլ ներդրում), ինչպես նաև դրանց գինը (արժեքը) և արժույթի անվանումը.

9) բարձրաստիճան պաշտոնատար անձի՝ պաշտոնական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու տարվան նախորդող հարկային տարվա ընթացքում, ինչպես նաև պաշտոնական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու տարվա հունվարի 1-ից մինչև պաշտոնական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրը ձեռք բերված և օտարված՝ հայտարարագրի աղյուսակի 2-5-րդ կետերում չնշված՝ 8 000 000 ՀՀ դրամը գերազանցող կամ դրան համարժեք արտարժույթից ավելի արժեք ունեցող թանկարժեք գույքի անվանումը, համառոտ հատկանիշները, թանկարժեք գույքի առկայության վերաբերյալ նշումը.

10) բարձրաստիճան պաշտոնատար անձի՝ պաշտոնական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու տարվան նախորդող հարկային տարվա ընթացքում, ինչպես նաև պաշտոնական պարտականությունները

ստանձնելու կամ դադարեցնելու տարվա հունվարի 1-ից մինչև պաշտոնական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրն ստացված եկամուտների արժույթը, եկամտի հանրագումարը՝ արտարժույթով (արտացոլված ըստ արժույթի տեսակների), դրամով և բնամթերքով, այդ թվում՝ աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումների արժույթը, գումարը՝ արտարժույթով (արտացոլված ըստ արժույթի տեսակների), դրամով և բնամթերքով:

3. Բարձրաստիճան պաշտոնատար անձի ամուսնուն, համատեղ ապրող ծնողին, համատեղ ապրող չափահաս ու չամուսնացած զավակին սեփականության իրավունքով պատկանող հարկային տարվա գույքի և եկամուտների հայտարարագրում ներառված՝ հրապարակման (տրամադրման) ենթակա տվյալների վերաբերյալ տեղականքում լրացվում է.

1) հարկային տարվա տարեթիվը, որի համար ներկայացվել է հայտարարագիրը.

2) բարձրաստիճան պաշտոնատար անձի ազգանունը, անունը, հայրանունը.

3) բարձրաստիճան պաշտոնատար անձի զբաղեցրած պաշտոնի ամբողջական անվանումը՝ ներառելով պետական մարմնի անվանումը.

4) ամուսնու (ծնողի, զավակի) ազգանունը, անունը, հայրանունը՝ ըստ անձնագրի.

5) բարձրաստիճան պաշտոնատար անձի ամուսնուն սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքի տեսակը՝ հողամասը, ընդերքի մասը, մեկուսի ջրային օբյեկտը, անտառը, բազմամյա տնկին, շենքը, շինությունը, հողին ամրակայված այլ գույքը, եթե հարկային տարում ձեռք բերված գործարքների ընդհանուր գինը (արժեքը) կամ օտարման գործարքների ընդհանուր գինը (արժեքը) գերազանցել է 50 000 000 ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը: Ընդ որում, ձեռքբերման գործարքների ընդհանուր գինը (արժեքը) կամ օտարման գործարքների ընդհանուր գինը (արժեքը) 50 000 000 ՀՀ դրամը գերազանցելու դեպքում ներառվում են անշարժ գույքի ձեռքբերման ու օտարման բոլոր գործարքները, դրա գինը (արժեքը), արժույթի անվանումը.

6) բարձրաստիճան պաշտոնատար անձի հետ համատեղ ապրող ծնողին, համատեղ ապրող չափահաս ու չամուսնացած զավակին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքի տեսակը՝ հողամասը, ընդերքի մասը, մեկուսի ջրային օբյեկտը, անտառը, բազմամյա տնկին, շենքը, շինությունը, հողին ամրակայված այլ գույքը, եթե հարկային տարում ձեռք բերված գործարքների

ընդհանուր գինը (արժեքը) կամ օտարման գործարքների ընդհանուր գինը (արժեքը) գերազանցել է 50 000 000 ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը: Ընդ որում, ձեռքբերման գործարքների ընդհանուր գինը (արժեքը) կամ օտարման գործարքների ընդհանուր գինը (արժեքը) 50 000 000 ՀՀ դրամը գերազանցելու դեպքում ներառվում են անշարժ գույքի ձեռքբերման ու օտարման բոլոր գործարքները, դրա գինը (արժեքը), արժույթի անվանումը.

7) բարձրաստիճան պաշտոնատար անձի ամուսնուն սեփականության իրավունքով պատկանող շարժական գույքի տեսակը՝ ավտոմոբիլային տրանսպորտի միջոցները, որոնց շարժիչների աշխատանքային ծավալը գերազանցում է 50 խոր. սանտիմետրը, իսկ առավելագույն արագությունը՝ 50 կմ/ժամը, ինչպես նաև տարբեր բեռնատարողությամբ կցորդները կամ կիսակցորդները, անվավոր, թրթուրավոր, ինքնագնաց մեքենան կամ մեխանիզմը, օդային, ջրային փոխադրամիջոցը, որոնք օտարվել կամ ձեռք են բերվել հարկային տարում, դրանց սերիան, մակնիշը, գինը (արժեքը), արժույթի անվանումը, եթե բարձրաստիճան պաշտոնատար անձի ամուսնու կողմից հարկային տարվա ընթացքում օտարված, իսկ ձեռքբերման դեպքում՝ նաև ձեռք բերված շարժական գույքի մեկ միավորի գինը գերազանցել է 7 000 000 ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը.

8) բարձրաստիճան պաշտոնատար անձի հետ համատեղ ապրող ծնողին, համատեղ ապրող չափահաս ու չամուսնացած զավակին սեփականության իրավունքով պատկանող շարժական գույքի տեսակը՝ ավտոմոբիլային տրանսպորտի միջոցները, որոնց շարժիչների աշխատանքային ծավալը գերազանցում է 50 խոր. սմ-ն, իսկ առավելագույն արագությունը՝ 50 կմ/ժամը, ինչպես նաև տարբեր բեռնատարողությամբ կցորդները կամ կիսակցորդները, անվավոր, թրթուրավոր, ինքնագնաց մեքենան կամ մեխանիզմը, օդային, ջրային փոխադրամիջոցը, որոնք օտարվել կամ ձեռք են բերվել հարկային տարում, եթե ձեռքբերման, իսկ օտարման դեպքում նաև օտարման գործարքների ընդհանուր գինը (արժեքը) գերազանցել է 8 000 000 ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը: Ընդ որում, ձեռքբերման գործարքների ընդհանուր գինը (արժեքը) կամ օտարման գործարքների ընդհանուր գինը (արժեքը) 8 000 000 ՀՀ դրամը

գերազանցելու դեպքում ներառվում են շարժական գույքի ձեռքբերման ու օտարման բոլոր գործարքները, դրա գինը (արժեքը), արժույթի անվանումը.

9) բարձրաստիճան պաշտոնատար անձի ամուսնու կողմից հարկային տարում ձեռք բերված, իսկ օտարման դեպքում նաև օտարված արժեթղթերը՝ պարտատոմսը, չեկը, մուրհակը, բաժնետոմսը և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքներով արժեթղթերի թվին դասվող այլ փաստաթղթը՝ բացառությամբ բանկային վկայագրի և (կամ) այլ ներդրումը հավաստող փաստաթղթը՝ բաժնեմասը, փայաբաժինը (արժեթուղթ և (կամ) այլ ներդրում), ինչպես նաև դրանց գինը (արժեքը), արժույթի անվանումը, եթե գործարքի գինը գերազանցել է 5 000 000 ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը.

10) բարձրաստիճան պաշտոնատար անձի հետ համատեղ ապրող ծնողի, համատեղ ապրող չափահաս ու չամուսնացած զավակի կողմից հարկային տարում ձեռք բերված և օտարված արժեթղթերը՝ պարտատոմսը, չեկը, մուրհակը, բաժնետոմսը և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքներով արժեթղթերի թվին դասվող այլ փաստաթղթը՝ բացառությամբ բանկային վկայագրի և (կամ) այլ ներդրումը հավաստող փաստաթղթը՝ բաժնեմասը, փայաբաժինը (արժեթուղթ և (կամ) այլ ներդրում), եթե հարկային տարում օտարված կամ ձեռք բերված արժեթղթերի և (կամ) այլ ներդրման գործարքների ընդհանուր գինը գերազանցել է 8 000 000 ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը: Ընդ որում, ձեռքբերման գործարքների ընդհանուր գինը (արժեքը) կամ օտարման գործարքների ընդհանուր գինը (արժեքը) 8 000 000 ՀՀ դրամը գերազանցելու դեպքում ներառվում են արժեթղթերի ձեռքբերման և (կամ) այլ ներդրման ու օտարման բոլոր գործարքները, ինչպես նաև դրա գինը (արժեքը), արժույթի անվանումը.

11) բարձրաստիճան պաշտոնատար անձի ամուսնուն սեփականության իրավունքով պատկանող՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի մայիսի 23-ի N 314-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված հայտարարագրի Ա1-Ա4-րդ կետերում չնշված և 8 000 000 ՀՀ դրամից կամ դրան համարժեք արտարժույթից ավելի արժեք ունեցող՝ հարկային տարվա ընթացքում ձեռք բերված, իսկ օտարման դեպքում՝ նաև օտարված թանկարժեք գույքի անվանումը, գույքի գինը (արժեքը) և արժույթի անվանումը.

12) բարձրաստիճան պաշտոնատար անձի հետ համատեղ ապրող ծնողին, համատեղ ապրող չափահաս ու չամուսնացած զավակին սեփականության իրավունքով պատկանող՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի մայիսի23-ի N 314-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված հայտարարագրի Ա1-Ա4-րդ կետերում չնշված և 8 000 000 ՀՀ դրամից կամ դրան համարժեք արտարժույթից ավելի արժեք ունեցող՝ հարկային տարվա ընթացքում ձեռք բերված, իսկ օտարման դեպքում նաև օտարված թանկարժեք գույքի անվանումը, գույքի գինը (արժեքը) և արժույթի անվանումը.

13) բարձրաստիճան պաշտոնատար անձի ամուսնու՝ հարկային տարվա ընթացքում ստացած եկամուտների արժույթը, եկամտի հանրագումարը՝ արտարժույթով (արտացոլված ըստ արժույթի տեսակների), դրամով և բնամթերքով, այդ թվում՝ աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումների արժույթը, գումարը՝ արտարժույթով (արտացոլված ըստ արժույթի տեսակների), դրամով և բնամթերքով.

14) բարձրաստիճան պաշտոնատար անձի հետ համատեղ ապրող ծնողի, համատեղ ապրող չափահաս ու չամուսնացած զավակի՝ հարկային տարվա ընթացքում ստացած եկամուտների արժույթը, եկամտի հանրագումարը՝ արտարժույթով (արտացոլված ըստ արժույթի տեսակների), դրամով և բնամթերքով, այդ թվում՝ աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումների արժույթը, գումարը՝ արտարժույթով (արտացոլված ըստ արժույթի տեսակների), դրամով և բնամթերքով:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ**
**ՂԵԿԱՎԱՐ** **Լ.ԳՐԻԳՈՐՅԱՆ**